

## ՀՀ ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՄՆԵՐԻ ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

### Նորայր Բալայան

*«Ի էլ էլ գործընկերություն» իրավաբանական գրասենյակի գործադիր տնօրեն,  
իրավաբանական գիտությունների թեկնածու*

Անկախացումից ի վեր Հայաստանի Հանրապետությունում մեկնարկել են բարեփոխումներ սոցիալական, տնտեսական, պետաիրավական, ինչպես նաև հասարակական կյանքի համարյա բոլոր ոլորտներում: 1990 թվականի օգոստոսի 23-ին Հայաստանի Հանրապետության անկախության հռչակագրի հիման վրա հիմք դրվեց դատաիրավական բարեփոխումներին: Հռչակագրի 3-րդ կետը սահմանում է. «Հայոց պետականության կրողը Հայաստանի Հանրապետության ժողովուրդն է, որն իր իշխանությունը իրագործում է անմիջականորեն և ներկայացուցչական մարմինների միջոցով Հայաստանի Հանրապետության սահմանադրության և օրենքների հիման վրա»:

Արդեն իսկ հռչակագիրը առանձին դրույթով կարգավորում է ժողովրդաիշխանությունը՝ նշելով, որ իշխանությունը պատկանում է ժողովրդին: Ժողովրդաիշխանությունը մարմնավորում է իրավունքի գերակայությունը: Դատաիրավական բարեփոխումների սկզբնական փուլում որպես իրավական լրջագույն ձեռքբերում հարկավոր է առանձնացնել 1995 թվականի Սահմանադրությունը, որն ընդունվեց համապետական հանրաքվեով: 1996 թվականի նոյեմբերի 8-ին հաստատվեց ՀՀ Նախագահի ՆՀ-669 հրամանագիրը «Հայաստանի Հանրապետության դատաիրավական համակարգի բարեփոխման մասին»: Սույն հրամանագրի 1-ին կետի ա) ենթակետի համաձայն.

*«Հանձնարարել Հայաստանի Հանրապետության կառավարությանը.*

*ա/ 3-ամսյա ժամկետում, խորհրդակցելով Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի, Հայաստանի Հանրապետության գերագույն դատարանի և Հայաստանի Հանրապետության դատախազության հետ, առաջարկություններ ներկայացնել Հայաստանի Հանրապետության Նախագահին Հայաստանի Հանրապետության դատաիրավական համակարգի բարեփոխման ծրագրի վերաբերյալ»:*

Հայաստանի Հանրապետության գործող օրենքների մեծամասնությունը ընդունվեց 1998 թվականից սկսած: 2003-2006 թվականներին շարունակվեցին առավել արդյունավետ և մատչելի դատական համակարգի ձևավորմանն ուղղված բարեփոխումները, որոնց հիմնական նպատակն էր արդարադատության համակարգի իրավական և սոցիալական երաշխիքների ապահովումը, արդարադատության մատչելիությունը և այդ ոլորտում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայի արդյունավետության բարձրացումը:

2005 թվականի նոյեմբերի 27-ին բարեփոխվեց Սահմանադրությունը, որում հստակեցվեցին Նախագահի ինստիտուտի դերը և նշանակությունը իշխանությունների բաժանման համակարգում: Սակայն այն մնացել է թղթի վրա, քանի որ Սահ-

մանադրության 49-րդ հոդվածի համաձայն՝ նախագահը ապահովում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունը, ավելին՝ Հանրապետության նախագահը արտաքին քաղաքականության, ազգային անվտանգության և պաշտպանության հարցերով նիստ հրավիրելու և վարելու իրավունք ունի: Հետևաբար՝ Նախագահը շարունակեց մնալ գործադիր իշխանությունում, քանի որ Նախագահը իրավունք ուներ հրավիրելու կառավարության նիստ և քննարկելու պետական սեփականության, հարկային, վարկային, ֆինանսատնտեսական, տարածքային զարգացմանը վերաբերող հարցեր:

Սահմանադրության 117-րդ հոդվածի 1) կետի համաձայն. «Սահմանադրական փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո՝ Ազգային ժողովը երկու տարվա ընթացքում համապատասխանեցնում է գործող օրենքները Սահմանադրության փոփոխություններին»: Սահմանադրության 116-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «85-րդ հոդվածի վեցերորդ մասի առաջին նախադասությամբ սահմանված դրույթն ուժի մեջ է մտնում 2008 թվականի հուլիսի 1-ից»: Հետևաբար՝ մինչև 2010 թվականի հուլիսի մեկը Ազգային ժողովը գործող օրենքները պետք է համապատասխանեցներ Սահմանադրության փոփոխություններին:

Եվ շարունակելով բարեփոխումների տրամաբանությունը՝ 2009 թվականի ապրիլի 21-ին ընդունվեց ՀՀ Նախագահի «Դատաիրավական բարեփոխումների 2009-2011թթ. ռազմավարական գործողությունների ծրագրի մասին» կարգադրությունը<sup>1</sup>: Սույն ծրագիրը ունի հինգ նպատակ՝

- 1) անկախ և հաշվետու արդարադատության ապահովում,
- 2) կոռուպցիոն ռիսկերի նվազեցում,
- 3) արդարադատության մատչելիության, արդյունավետության և թափանցիկության ապահովում,
- 4) դատական ակտերի կատարման բարելավում,
- 5) դատաիրավական համակարգի օրենսդրության և ռազմավարության բարելավում:

Ծրագրով նախատեսված էր 36 գործողություն: 2011 թվականին ծրագիրը ավարտվեց: Հարկ է նշել, որ ծրագրով նախատեսված ոչ բոլոր գործողությունները իրականացվեցին, և որպես պատճառ նշվում էր ֆինանսավորման բացակայությունը: Մինչդեռ ծրագիրը ավարտվելուց հետո չներդրվեց համապատասխան մշտադիտարկման համակարգ, որը հնարավորություն կտար պարզել՝ արդյո՞ք ծրագրով նախատեսված բոլոր գործողությունները կատարվել են, արդյո՞ք ամբողջությամբ ներդրվել են համապատասխան կառուցակարգերը: Այսինքն՝ դատաիրավական բարեփոխումների պարագայում կարևոր նախապայմանն այն չէ, որ օրենքում կատարվեցին փոփոխություններ կամ լրացումներ, այլ այն է՝ արդյո՞ք այդ իրավական նորմը կենդանի ուժ ստացել է, թե՞ ոչ: Մասնավորապես առանցքայինը այն չէ, որ պետությունը կատարեց իր պոզիտիվ պարտականությունը, այլ այն է, թե որքանով է օրենքում առկա փոփոխությունը գործում հասարակությունում և դառնում կենդանի նորմ հարաբերությունների կարգավորման գործում:

Իրավական նորմերի կիրառական կառուցակարգերը պարզելու նպատակով գործողությունների ծրագրի 3.6 կետով նախատեսվել էր հետևյալ գործողությունը՝ «Դատարանների գործողության նկատմամբ հանրային մոնիթորինգի իրականացում»: Սույն գործողության հիմնավորում նշվել էր հետևյալը. «Հասարակության՝

<sup>1</sup> Տե՛ս <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=66236>

*պետության նկատմամբ վստահության բարձրացման և դատարանների նկատմամբ վերաբերմունքի դրականորեն փոփոխման նպատակով անհրաժեշտություն է նաև վերջիններիս գործունեության նկատմամբ հսկողության արդիական ընթացակարգերի ներդրումը, որը հնարավորություն կտա դրան մասնակից դարձնել նաև քաղաքացիական հասարակությանը»:*

Այդպես էլ մոնիթորինգի համակարգը չներդրվեց, և քաղաքացիական հասարակությունը մասնակից չդարձավ դատարանների գործունեության նկատմամբ հսկողությանը:

2012 թվականի հունիսի 30-ին ընդունվեց ՀՀ Նախագահի «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» կարգադրությունը: Սույն ծրագիրը ուներ հետևյալ նպատակները<sup>1</sup>.

1) արդար, արդյունավետ և հանրության առջև հաշվետու դատական իշխանության ապահովում,

2) քրեական արդարադատության և քրեական պատիժների համակարգի արդյունավետության բարձրացում,

3) վարչական արդարադատության և վարչական վարույթի արդյունավետության բարձրացում,

4) քաղաքացիական արդարադատության արդյունավետության բարձրացում և քաղաքացիական օրենսդրության կատարելագործում,

5) դատավարական գործառնությունների իրականացման արդյունավետության բարձրացում,

6) փաստաբանական համակարգի բարեփոխումների ապահովում,

7) դատախազության գործունեության արդյունավետության բարձրացում,

8) արբիտրաժային, նոտարական և հանրային ռեգիստրների վարման համակարգերի արդյունավետության բարձրացում,

9) իրավական համաուսուցման և իրավական դաստիարակության համակարգի վերակառուցում:

Ծրագրով նախատեսված էր 133 գործողություն: Եվ գործողությունների ծրագրի 1.8 կետով նախատեսված է հետևյալ գործողությունը. «Կատարելագործել դատավորների միջև գործերի օբյեկտիվ (պատահական) բաշխման համակարգը»: Նույնաբովանդակ գործողություն նախատեսված էր նաև 2009-2011 թվականների դատաիրավական բարեփոխումների ռազմավարական ծրագրով: 2012-2016 թվականների դատաիրավական բարեփոխումների ծրագրով նախատեսված էր մոտ 45 գործողություն, որոնց ակնկալվող արդյունք նշված է օրենքի նախագիծը ՀՀ ԱԺ ներկայացնելը: Այսինքն՝ պետության թիրախը շարունակում է մնալ իրավաստեղծ աշխատանքը, այլ ոչ թե իրավակիրառական կառուցակարգեր նախատեսելը: Թեև 2009-2011 թվականների ծրագրով սահմանված էր մոնիթորինգի համակարգի ներդրումը, սակայն այդպես էլ չներդրվեց, ինչը հնարավորություն կտար իրականացնել կարիքների գնահատում:

2016 թվականի նոյեմբերի 30-ին ՀՀ Նախագահի կարգադրությամբ կատարվեցին փոփոխություններ Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին կարգադրության մեջ: Շուրջ 50

<sup>1</sup> Տե՛ս <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=110851>

գործողությունների ժամկետները երկարաձգվեցին, ինչը կազմում էր 2012-2016 թվականների դատաիրավական բարեփոխումների ռազմավարական ծրագրի 38%-ը:

2015 թվականի դեկտեմբերի 6-ին համապետական հանրաքվեի արդյունքում Սահմանադրության մեջ կատարվեցին էական փոփոխություններ, որոնք ուղղված էին Հանրապետությունում խորհրդարանական կառավարման կարգ հաստատելուն: Սույն փոփոխությունները իրենց հերթին դատաիրավական նոր բարեփոխումների սկիզբ դարձան:

Հարց է ծագում՝ արդյո՞ք հարկավոր է դատաիրավական բարեփոխումների իրականացումը Հանրապետությունում, արդյո՞ք հարկավոր է այդքան մեծ ծավալի գործողություններ նախատեսել: Դատաիրավական բարեփոխումների անհրաժեշտությունը զարգացող երկրների համար խիստ անհրաժեշտ է, քանի որ հիմնական օրենքներում հռչակելով իրավական, ժողովրդավարական պետության սկզբունքները՝ պետության առաջիկա տասնամյակների քաղաքականությունը ուղղված է լինում այդ հիմնարար հիմունքների իրագործմանը: Միաժամանակ, մինչև իրավունքի գերակայության հաստատումը Հանրապետությունում շարունակական բնույթ է կրելու դատաիրավական բարեփոխումների իրականացումը: Տեղին է հարցնել, թե յուրաքանչյուր բարեփոխումից ինչ է քաղում պետական իշխանությունը՝ որպես իրավաստեղծ մարմին: Այսպես՝ 2007 թվականին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը, որը շուրջ վեց տարվա իրավական կյանք ունեցավ, քանի որ 2013 թվականին ընդունվեց ՀՀ վարչական դատավարության նոր օրենսգիրքը: Ի դեպ, հարկ է նկատել, որ վարչական դատավարության առաջին օրենսգրքի գործողության ժամանակահատվածում որևէ իրավահամակարգային փոփոխություն չէր եղել, իսկ օրենսգրքում կատարվել էր ընդամենը 15 օրենսդրական փոփոխություն, և Սահմանադրական դատարանը երեք նորմ ձանաչել էր ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր: Կրկին բախվում ենք մի հարցի՝ արդյո՞ք հանրապետությանը հարկավոր էր վեց տարվա ընթացքում ընդունել երկու դատավարական փաստաթղթեր, եթե շարունակում է գործել 1986 թվականին ընդունված վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը: Իրավունքի տեսությունը վկայում է այն մասին, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը վարչական իրավունքի մարմինն է, իսկ վարչական դատավարության օրենսգիրքը ապահովում է այդ մարմնի շարժը: Կարելի է եզրահանգել, որ վարչական իրավախախտումների նոր օրենսգիրք ընդունելուց հետո կրկին անհրաժեշտ է լինելու համակարգային փոփոխություններ կատարել վարչական դատավարության օրենսգրքում՝ կենդանի իրավունքի փոփոխությունը կյանքի կոչելու համար:

Աշխարհը վաղուց քաջատեղյակ է Դեմինգի փուլին<sup>1</sup>: Այն բաղկացած է իրար հետ սերտորեն փոխկապված չորս տարրերից՝ *ալյանավորում, կատարում, ստուգում, բարելավում*: Սույն փուլը ենթադրում է անընդհատ գործողությունների համալիր: Այս մեխանիզմը թեև մշակվել է արտադրության համար, այնուամենայնիվ այն լայնորեն կիրառվում է նաև հասարակական կյանքի այլ ոլորտներում, մասնավորապես՝ Գերմանիայում՝ նաև իրավական դաշտում: Հետևաբար՝ սույն մեխանիզմը կարող է կիրառվել նաև հանրապետության իրավական համակարգում: Եթե մեխա-

<sup>1</sup> Տե՛ս <http://asq.org/learn-about-quality/project-planning-tools/overview/pdca-cycle.html>

նիզմի յուրաքանչյուր տարրը խնդրո առարկա դարձնենք, ապա մեր իրականությունում կունենանք հետևյալ մոդելը.

*ա) Պլանավորում* - 2015 թվականի դեկտեմբերի 6-ից հետո հայկական իրավական ոլորտի զարգացման առաջիկա տասը տարին կանխորոշված է: Յուրաքանչյուր պետություն, ընդունելով Սահմանադրությունը, երկու նպատակ է հետապնդում . առաջինը՝ հիմնական օրենքում արտացոլել արդեն իսկ առկա քաղաքասարակաիրավական իրականությունը, երկրորդը՝ այն հասարակական, քաղաքական, իրավական կարգը, որը պետությունը կցանկանար ունենալ իր իրականությունում: Հայաստանի Հանրապետությանը կարելի է դասակարգել երկրորդ խմբում, այսինքն՝ փորձում ենք ունենալ ավելի լավ իրականություն: Վերջին սահմադրաիրավական բարեփոխումները արդեն իսկ կանխորոշել են առաջիկա դատաիրավական բարելավումների շրջանակը: Հռչակելով ժողովրդաիշխանության, օրենքի առջև հավասարության սկզբունքները և իրավական, ժողովրդավարական և սոցիալական պետություն ունենալու սկզբունքները՝ յուրաքանչյուր բարելավում պետք է ուղղված լինի հիշյալ սկզբունքների և հիմունքների կյանքի կոչմանը: Եթե ձգտում ենք ունենալ իրավունքի գերակայություն, ապա հարկավոր է իրավակիրառ պրակտիկայում ապահովել հիմնական իրավունքների առաջնայնությունը, կանխատեսելի դարձնել դատարանների որոշումները. չէ՞ որ հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջական գործող իրավունք:

*բ) Կատարում* - սույն շրջափուլում հարկավոր է մշակել այնպիսի գործողություններ, որոնք ուղղված կլինեն վերը հիշատակված սկզբունքների և հիմունքների իրագործմանը: Այսպես՝ պատրաստել տեսահոլովակներ, հաղորդումներ, որտեղ մանրամասն և մատչելի կներկայացվեն մարդու հիմնական իրավունքները և ազատությունները, պատրաստել դատաիրավական խնդիրների վերաբերյալ ֆիլմեր և հեռուստասերիալներ՝ դրանց միջոցով նպաստելով անհատական և կոլեկտիվ իրավագիտակցության աճին, ապահովել անվճար և մատչելի որակյալ իրավաբանական ծառայությունների մատուցում, պարբերաբար և շարունակական իրականացնել դատավորների վերապատրաստումներ՝ ուղղված դատական սխալի նվազեցմանը՝ հաշվի առնելով այն, որ պետությունն է բարոյական պատասխանատվություն կրում իր նշանակած դատավորների համար:

*գ) Ստուգում* - անցկացվում են համեմատականներ Պլանավորման և Կատարման շրջափուլերի միջև, այսինքն՝ բացահայտվում է, թե գործողությունները ինչ ծավալով են իրագործվել: Այստեղ կատարվում է նաև կարիքների գնահատում, սակայն, ցավոք, մեզ մոտ դա չի իրականացվել: 2016 թվականին հասարակությունում առաջին անգամ իրականացվեց մոնիթորինգ հետևյալ ուղղությամբ՝ «Արդարադատության ոլորտի վերաբերյալ հանրության կարիքները և ակնկալիքները Հայաստանում»<sup>1</sup>: Սույն զեկույցի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հասարակությունը կարիք ունի ոչ թե նոր իրավական ակտերի, այլ դրանց կիրառման, դատական որոշումների կախատեսելիության և որակյալ իրավաբանական ծառայությունների:

<sup>1</sup> Տե՛ս Եվրոպական Միության «Արդարադատության մոնիթորինգ» ծրագիր Հայաստան, Արդարադատության ոլորտի վերաբերյալ հանրության կարիքները և ակնկալիքները Հայաստանում, Մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ զեկույց, EuropeAid/1137012/DH/SER/AM, 2017:

դ) *Բարելավում* - ստուգման արդյունքների հիման վրա մշակվում է բարելավումների գործողությունների ծրագիր, որն ուղղված է այն սկզբունքների և հիմունքների իրականացմանը, ինչը մատնանշվել էր պլանավորման շրջափուլի ժամանակ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հարկ է նշել, որ հարկավոր չէ յուրաքանչյուր անգամ մշակել դատաիրավական բարեփոխումների եռամյա կամ քառամյա ռազմավարություն և այն հիմնականում ծանրաբեռնել իրավական ակտերով: Բնական է, որ սահմանադրական բարեփոխումներից հետո մի շարք իրավական ակտերի ընդունման օբյեկտիվ անհրաժեշտություն կարող է առաջանալ, սակայն հարկավոր չէր սկսել դրանց վրա, ընդհակառակը՝ անհրաժեշտ է ներդնել համապատասխան կառուցակարգեր, որոնք հնարավորություն կտան պարզելու, թե որքանով է կյանքի կոչվել ընդունված իրավական ակտը իրավակիրառ պրակտիկայում և որքանով է դարձել կենդանի իրավունք հասարակությունում: Հիմք ընդունելով այն, որ հանրապետությունը արդեն ունի իր ռազմավարությունը՝ Սահմանադրությունը, յուրաքանչյուր փուլում հարկավոր է մշակել համապատասխան մարտավարություն, այսինքն՝ գործողությունների ծրագիր: Ուստի առաջարկում ենք հետևյալ կառուցակարգը, քանի որ ՀՀ կառավարությունը՝ որպես գործադիր իշխանության բարձրագույն մարմին, իրականացնում է պետության ներքին և արտաքին քաղաքականությունը, յուրաքանչյուր տարի մշակում է դատաիրավական գործողությունների ծրագիր և այն ներկայացնում է Ազգային ժողովի հաստատմանը: Այնուհետև՝ հաջորդող տարում, կառավարությունը ներկայացնում է զեկույց կատարված գործողությունների վերաբերյալ: Հիմք ընդունելով այդ զեկույցը՝ Ազգային ժողովը հաստատում է գործողությունների նոր ծրագիրը: Յուրաքանչյուր երեք տարին մեկ Ազգային ժողովը ստեղծում է քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչներից խումբ, որը կազմակերպում և իրականացնում մոնիթորինգ, թե ընդունված իրավական ակտերը որքանով են կիրառվում հասարակական կյանքում:

## ПРАКТИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ СТРАТЕГИЧЕСКИХ ПРОГРАММ ПО СУДЕБНО-ПРАВОВЫМ РЕФОРМАМ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Норайр Балаян

*Исполнительный директор юридической конторы «И ЭЛ ЭЛ партнерство»,  
кандидат юридических наук*

Со дня обретения независимости в Республике Армения проводятся многочисленные реформы в судебной и юридической сфере. Каждый этап реформы преследует свою цель. По завершении первой стадии реформы не выполняется детальный анализ о недостатках, а просто вступаем в следующую стадию без обеспечения применения права и формирования правовой культуры. В рамках этого исследования предлагается ввести соответствующий механизм, который обеспечит непрерывность и беспрестанность судебно-правовых реформ.

---

## PRACTICAL PROBLEMS OF JUDICIAL STRATEGIC PROGRAMME IN THE REPUBLIC OF ARMENIA

**Norayr Balayan**

*«ELL Partnership» Law Firm,  
Candidate of Legal Sciences*

---

Since its independence several reforms in judicial and legal spheres have been being implemented in the Republic of Armenia. Each phase of reforms has its objective. There is no sufficient research on shortcomings after every cycle of reforms, but in reality we turn to the next cycle of reforms without ensuring their fulfillment and forming legal culture. The present research suggests to insert an appropriate mechanism, which will ensure the continuity and incessancy.

**Բանալի բառեր** – *բարեփոխումներ, պրակտիկ խնդիրներ, ծրագիր, ռազմավարություն, ազդեցություն, իրավունք*

**Ключевые слова:** *реформы, проблемы, программа, стратегия, влияние, права*

**Key words:** *reforms, practical problem, programme, strategic, influence, judicial*